

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դեր 10 րուբլի, կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Վաճ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կ ու կ ի ա յ ի Թ ա ն դ ո յ ե ա ն ե կ ե ղ ե յ ու ե ի ռ է ջ փ ո լ ը յայտարարում է ի դիտու-
թիւն հայ հասարակութեան, որ կիրակի օր, Վարդավառի տօնին, յուլիսի 12-ին, նոյն
եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ

Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ի Կ Ե Կ Ե Լ Թ Ա Ն Գ Ո Յ Ե Ա Ն Յ Ն Ե Ր Ի

մահվան տարեդարձի առիթով: Պատարագը սկսվելու է առաւօտեան 10 ժամին: Պատար-
ագի ժամանակ կերպէ նոյն եկեղեցու մշտական բառածայն խումբը: 1—1

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Նոր օրինակներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եր-
կաթնուրի Արաքի հովիտում. Գրական բարբերից-
նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրու-
թեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատարագ. Ծը-
րանդական դրոշմ. Արտաքին լուրեր.—ԽԱՌԻՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրադարան կենտրոն:

ՆՈՐ ՕՐԻՆԱԿԻԾ

Այս օրերս մայրաքաղաքի լրագրիները
հայրենիքի մանկական խնդրի մասին
մի կարեւոր լուր.—քաղաքացիական օրենս-
դրութիւնը կազմող յանձնաժողովը արդէն
մշակել ու ներկայացրել է պետական խոր-
հրդի ընտրութեան մի օրինագիծ, որով թոյ-
լատրվում է ամուսններին, որոշ դէպքե-
րում, առանձին-առանձին ապրել:

Ինչպէս յայտնի է, ամուսնութիւնը, որ
մեզանում կրօնական խորհուրդ է համար-
վում, ամենաճանաչ պարտաւորութիւններ
է դնում երկու ամուսնիների վրա: Եկեղե-
ցական կանոնները անպայման պահանջում
են, որ ամուսնիները անբաժան ապրեն.
նոյն փնտրական պահանջը դնում է և օ-
րենքը: Սակայն ժամանակակից կեանքի
պահանջները չեն համապատասխանում ոչ
եկեղեցական կանոններին և ոչ օրենքին և
նա վարուց յարուցել է ամուսնիների ան-
կախ ապրելու հարցը: Այդ հարցը այնքան
հասունացել է, որ նրա լուծումը անյե-

տաճելի էր համարվում և այդ պատճա-
ռով նոր օրենսդրութիւնը մշակող յանձնա-
ժողովը չէր կարող զանց առնել ու փորձ
չանել օրենսդրական կերպով լուծել նրան:

Ամուսնութիւնը թէ իբրեւ եկեղեցական
խորհուրդ, թէ իբրեւ կամուար կնքած
դաշնագրութիւն, անտարակոյտ, այնպիսի
դաշն է, որ հիմնված է երկու հանրերի
փոխադարձ սիրոյ և բարոյական համարա-
խութեան սկզբունքի վրա. նա մի բարո-
յական կապ է, որով երկու եակ ինքնա-
յոժար կերպով շարկապվում են միմե-
մաս: Եկեղեցին և օրենքը, որոնք սրբա-
գործում են այդ կապը, թող են տալիս
նրա լուծումը միայն ամենահազուադիւս
դէպքերում, զլիսաւորապէս ամուսնիներից
մէկի անհաւատարմութեան դէպքում:
Բայց այդ լուծումն էլ տեւում է տարի-
ներ: Սակայն կեանքի մէջ լինում են դէպ-
քեր, որոնք անհրաժեշտ են կացուցանում
ամուսնիների առանձին-առանձին ապրելու
Այսպէս, օրինակ, տղամարդը ծեծում է
կնոջը, անառակ կեանք է վարում, հար-
բում է, փչացնում, վատնում է ընտանիքի
հարստութիւնը, վարակվում է անբժշկելի
և վնասակար հիւանդութեամբ, խելագար-
վում է, իր անբարոյական կեանքով վատ
օրինակ է հանդիսանում իր զաւակներին:
Նոյնպէս պատահում է, որ կինը անառակ
կեանք է վարում, շուտաւարձ է և ա-
նում, հիւանդանում է, խելագարվում է,
անբարոյականութեան օրինակ է դառնում:

Թափվում, երկինքը բացվում է... Արի ու մի
հնազանդվիր. ինչ կարող է անել. նրա ձեռքից
ինչ կը դաշ: «Ծիրոյ կամքն է»—մտածում է նա
ու համբերում:

Սրա հակառակ՝ երբեմն էլ երբ հարկաւոր չէ,
օրերով շուր է թափվում երկնքից, արտերը հե-
ղեղում, ողորում է, դալար ծիւրեր մերկացնում
արմատախիլ է անում, շատերին էլ խեղդած
գիւղիների պէս առջն անում, ըշում, տունում
է ուր որ ուղում է: Գրկապոյ. արի ցամաք
տես ու մի յուզվիր: Շատ էլ յուզվիր, բայց
ինչ կարող է անել, ձեռքից ինչ կը դաշ, բայց
համբերելուց: Բնութեան ամեն մի աղետ ու
պատահար նա ընդունում է ինչպէս Աստուծոյ
ղրկված պատժ: Այդ բանը այնպէս է արմա-
տացած նրա մէջ, որ աւելորդ է համարում,
«միղք» ու յանդգնութիւն է համարում որ և է
կերպով դէմ կենալ, բողբոջել, նոյն իսկ զոգո-
նութիւն յայտնել նրանց դէմ: Պէտք է խոսար-
վել բնութեան կամքի առաջ. պէտք է հնա-
զանդվիր, մինչև որ Աստուծու սիրտը կը կակղի,
կը մեղքանայ մարդկանց վրա:

Ինչն էլ նոյն դերքը, նոյն խոսարումներն ու
կոյր հնազանդութիւն է պահանջում դէպի իր
ամեն մի ասածն ու կարգադրութիւնը, տանն
ու դուրսը, թէ իր տան անդամներից և թէ բա-
նեցած մարդից: Նա պէտք է ասել, որ ինչպէս
որ իրան անտանիքի չէ լուծում իր դրութիւնը,
նոյն հայտ ու խաղաղ տրամադրութիւն են ցոյց
տալիս և նրա ստորադրել, բանական ու ան-
բան արարածները իրանց խոսարումներն մէջ:
Նրանց չէ էլ թուում, թէ յիշաւ իրանք են-
թարկված ու հպատակված են մէկի անասման
կամքին: Նրանք դրա վրա չեն էլ մտածում,
ինչպէս որ դրա վրա չէ մտածում նրանց տէրը:
Բնութեան ճիշդ հնազանդվելիս: Նրանց փոխա-
դարձ յարաբերութիւնն իրար հետ բնական ու
խաղաղ է անցնում: Մէկը համարված է, որ

իր զաւակների համար... Եկեղեցական կա-
նոնների և օրենքի տեսակէտից այդ բոլոր
դէպքերը, բացի մէկից—պոռնիկութիւնից,
չեն կարող ամուսնալուծութեան հիմն
համարվել. և հայ ամուսնիները մատնե-
վում են անտանիքի բարոյական տանջանք-
ների և ուրիշ ելք չը գտնելով ազատվել
նրանից, շատ անգամ դիմում են ծայրա-
յեղ միջոցների,—անձնասպանութեան, ա-
յօրինի կենակցութեան, կամ կատարեալ
անբարոյականութեան...

Նոր երկու հանրերին միացնող փոխա-
դարձ սիրոյ և համբարախութեան բարո-
յական կապերը չքանում են, և կամ գորեւ
պատճառներ անհնարին են դարձնում նը-
րանց փնտրելութիւնը միասին, ինչպէս
խելագարութիւնը և այլ անբուժելի հի-
ւանդութիւնները, ամենակերպից և բարո-
յական միջոց վերջ գնելու անտանիքի
կեանքին—առանձին-առանձին ապրելն է:
Նա այդ միջոցը վաղուց ընդունված է եւ-
րոպական օրենսդրութեան մէջ: Այդ մի-
ջոցը անհրաժեշտ է և այն դէպքում, երբ
երկու ամուսնիները վարում են ա-
մուսնալուծութեան դատ, որ տեւում է
տարիներով և հետեւաբար, ստիպված չեն
լինում ապրել միմեանց հետ, ատելով մի-
մեանց:

Մամուլի մի քանի օրգաններ երկիւղ
են յայտնում, որ ամուսնիների առանձին-
առանձին ապրելու օրենքը կարող է շատ
զեղծումների պատճառ դառնալ երկու
կողմից ևս: Այսպէս, օրինակ, կինը, տես-
նելով որ մարդը աղքատ է և ինքն չէ
կարողանում շուտ կեանք վարել, կարող
է, առանձին ապրելով, անառակութեան
դիմել: Այդ պատճառով խորհուրդ են
տալիս զոռն խիստ ոստիկանական մի-
ջոցներով սահմանափակել առանձին ապ-
րելու իրաւունքը: Այդ տեսակէտը, մեր
կարծիքով, սխալ է: Նրբ ամուսնական
միութեան մէջ չքանում է բարոյական
կապը—փոխադարձ սէրը, համակրութիւնը

ինքը այնպէս չանի, մեծութիւն չանի, չի լինի,
գործը առաջ չի դնալ. միւսներն էլ հակառակը
դիտեն, որ եթէ մեծին չը լսեն, մեծ չունենան,
գործը գլուխ չի գալ: Նա այսպէս՝ դարբեր ըն-
թացքում մէկը հրամայում է, միւսները կատա-
րում են. և կատարում են միմյան հնազանդ ու
խոնարհ կերպով, առանց ստիպվելու, իրանց
յոժար կամքով, որովհետեւ իրանց գործն այն է,
բնութեան կարգն այնպէս է: Նա այսպէս՝ ամեն
տարի իրար վրա խող լակուղում է, ձին քու-
ռակ է տալիս, հաւը ձու է ամուս, ամբողջ օրը
կողմ ծածում ուռնում է, տարուց տարի յղա-
նում հորթուկ է տալիս, նոյն իսկ տան ան-
դամները տարուց տարի մէկ-մէկ հասնում, մե-
ծանում են, նոր անդամներ են աւելանում,
ամուս, շատանում են, բանով-գործողներ աւե-
լանում են, բայց գործն էլ չէ պակասում, նա
էլ է աւելանում. և ետեւովան պէս մէկը հրա-
մայում է, միւսները հնազանդվում են:

Այդ բնական հայեցակէտն է տիրապետում և
նրա ընտանեկան ու հասարակական կեանքում:
Տունը առանց մեծի չի լինի, մէկը պիտի լինի,
որ տունն ու գործերը կառավարէ: Փանի որ
հայրը ջանի է, սովորաբար հայրն է լինում
տան մեծը. բայց երբ որդիքը չափահաս են
դառնում կամ հայրը մեռնում է, մեծը նրան-
ցից մէկն է լինում, երբեմն նոյն իսկ փոքր
եղբայրը, նայելով թէ որն աւելի խելո ունի,
նով աւելի ճարպիկ է և որի ձայնը գիւղում
աւելի կշիռ ու ազդեցութիւն ունի: Բայց մե-
ծութիւն անելուց ու հրամայելուց, նա պէտք է
մի և նոյն ժամանակ տան ու իրանց գոր-
ծի շահերը լաւ հասկանալու և կարողանալ
պաշտպանել ուրիշների մօտ: Նրան չը լսել չի
լինի. անընդունաւոր անանց զլխաւորի չի լինի.
նով հրամայի, պէտք է անխօս կատարէ:
այսպէս է կարգը: Որին արտն է զրկում հերկե-
լու, որին անտառը՝ փայտի, որին մայրն է

և յարգանքը, այլ ևս անհնարին է որ և
նոստիկանական միջոցով պահպանել այդ
կապը. ընդհակառակը, գործը այնպէս
պէտք է դնել, որ իրանք ամուսնիները
միայն անհրաժեշտ դէպքերում, եթէ այլ
ևս ուրիշ ելք չը կայ, դիմեն բաժանման:
Ցամենայն դէպս, նոր օրենսգիծը, իբրեւ
կեանքի պահանջներից բխած մի անհրա-
ժեշտութիւն, մեր կարծիքով, ոչ միայն
չի վնասի ամուսնական բարոյականութեան,
ոչ միայն չի խախտի նրա հիմքը, ինչպէս
շատերը երկիւղ են կրում: այլ աւելի
կը նպաստի այդ բարոյականութեան, ա-
ւելի կը սրբագործի ընտանեկան համե-
րաշխ կեանքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՌՈՒՂԻ ԱՐԱՔՍԻ ՀՈՎՏՈՒՄ

Այլ ևս կասկած չը կայ, որ շուտով երկա-
թուղու գիծ կանցնի Արաքի հովիտով մինչև
Ջուլֆա: Այդ երկաթուղին ձգվելով Երևանի նա-
հանգի ամբողջ երկարութեամբ՝ կը միացնի նա-
հանգի զանազան մասերը, բայց որ աւելի նշա-
նաւորն է՝ նա կը միացնի այդ նահանգը թէ
կովկասի և առհասարակ Ռուսաստանի միւս
մասերի և թէ ամբողջ Եւրոպայի հետ: Երևանի
նահանգը ունի հարուստ բնութիւն, հին, բաւա-
կան դարգացած կուրուրա և աշխատանք ազ-
գաբնակչութիւն: Մեր երկրի քիչ տեղերում այն-
քան թանգ է հողը, ինչպէս այդ նահանգում,
բայց և շատ քիչ տեղերում երկրագործութեան
արդիւնքները այնքան էժան են, ինչքան այդ
նահանգում: Դեղեցիկ մրգերը և պտուղները, լեռ-
նականների պարապմունքների արդիւնքները չեն
գտնում գնորդներ և կամ փչանում են, կամ ան-
ձեռնուռ պայմաններով վաճառվում: Երկաթու-
ղու միջոցով Երևանի նահանգի ազգաբնակչու-
թիւնը կը գտնի իր արդիւնքների արտահանու-
թեան համար վաճառանոցներ և կարող է ձեռ-
նարկել նոր ծախսերի իր երկրը շինարարելու և
արդիւնագործութիւնը ընդարձակելու: Նամար
Երկաթուղու միջոցով նա կարող կը լինի նոյն-

յանմանով հովիտներ, որին էլ քաղաք կամ մի
ուրիշ տեղ է զրկում: այս կամ այն բանը բե-
րելու: Նա լաւ գիտէ, թէ ով ինչ կարող է ա-
նել. ամեն մէկին իր ոյժին ու խելին համե-
մատ մի բանի է դնում և նրանցից ամեն մէկը
իր գործն է անում. անում է՝ որովհետեւ չանե-
լը չի լինի, պէտք է լսել: Նա է պարկայ ըս-
կիւրից կարողաբար՝ ինչքան տեղ պիտի վարի
ու ցանի հացի համար, ինչքան տեղ հերկը կը
լինի իրանց, ինչքան դարման կերթայ անասուն-
ներին, երբ պիտի տալ սրա նրա պարտքը, երբ
և որին պիտի նոր շոր կարվի, մի խօսքով տան
բոլոր պակասները հոգացողութիւնը գլխաւորա-
պէս նրա վրա է. նա պէտք է դրանց բոլորի
վրա մտածէ, դրանց ամեն մէկի ճարը գտնէ:
Շատ էլ նրա ասածն ու հրամայածը մէկին
դժուար գալ, ով կարող է դէմ գալ, մեծը ասել
է, պէտք է կատարել: Խելքը որ չը կտրէր, չէր
ասի: Սովորաբար գիւղացին ինքն իր խելով է
զարձնում գործը, առանց մէկից խորհուրդ հարց-
նելու: Նայն իսկ կնոջը բանի տեղ չէ դնում.
Ինչ նրա բանն է—խելը, իրատեղը. չէ որ նա կին
է. ով է նրան այդքան խելք տուել: Եթէ իմա-
նան, որ նա կնոջն էլ է խորհուրդ հարցնում,
գիւղում մինչև անգամ նրան կը ծարրեն, թէ
կնոյ խելքովն է շարժվում:

Այդ մեծի հայրանքովն է, որ երբեմն աղջիկը
իր ուղածից աւելի է տանը մնում, չը նայելով
որ նրա յետեից շատերն են մարդ ուղարկում:
Շատ էլ նրան ուղող կայ, մեծը որ չը տալ, ուր
կարող է գնալ: Շատ-շատ ներք մնայ, մէկ օր
կը փախչի. բայց ամենքն էլ չի անի այդ,
չէ որ դա լաւ անում չունի: Ով գիտէ՝ մեծն էլ
իր հայրենիքը կուռնայ որ չէ տալիս. ինչ էլ լի-
նեն հայրենիքը, գլխաւոր բանը էլ իրանց տան
գործերը կը լինեն: Աղջիկը երթայ, բանողի
մէկն էլ պիտի պակսի. գործը լաւ չի գնալ. լաւ
է մի քիչ էլ սպասել, որդին հայ-հայ կը մեծա-

*) Թէ այս և թէ գիւղական կեանքը վերջած մի
քանի ուրիշ յօդուածներում հետեւել ենք տեղ-տեղ
առաջը դրել Գլխը Ուսուցչական:

պէս ապահովել իր ամենամեծ կարկէնները մէկ-կը, այն է վառելիքը, որ ներկայումս շատ թանկ է և մեծ արգելք է լինում սկսելու այնպիսի ձեռնարկութիւններ, որոնց հետքերն են հարկաւոր: Ինչպէս յայտնի է, այժմ Անդրկովկասում ամենաթանկ վառելիքն է նաւթի մաքուրը, որ մեծ քանակութեամբ այժմ սպառվում է բոլոր այն տեղերում, որոնք ընկած են երկաթուղու գծի վրա կամ մօտ են այդ գծին: Երևանի երկաթուղու միջոցով յարմար ճանապարհ ձեռք կը բերեն նաև Ջանդուղիի հանքերը՝ իրանց արդիւնները վաճառանոց ուղարկելու համար:

Երկաթուղու այդ գիծը ունի և մի ուրիշ մեծ նշանակութիւն, այն է, որ նա կապում է ամբողջ պետութիւնը իր սահմանագծի հետ և, մօտենալով Պարսկաստանին, նպաստում է թէ խաղաղ ժամանակի յարաբերութիւնների զարգացման և թէ պատերազմական ժամանակի կարեւոր լրացման: Պարսկաստանի ընդարձակ Արաքսական նահանգը, որ մի հարուստ երկիր է, չունի դուրս գալու տեղեր, որովհետև չընկալուած է կամ անանցանելի և դժուարամատչելի լեռներով կամ անվերջ ապարդիւն անապատով, որ ձգվում է դեպի Պարսկաստանի խորքը: Ձուլֆան ներկայումս էլ նրա չնչառութեան օրդանները մէկն է, նրա դուրս գալու դժուրեղ մէկը: Իսկ երկաթուղին հաստատուելուց յետոյ՝ նա կը դառնայ իսկապէս մի կարևոր ելք փակված երկրի համար:

ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հակայ-հայր է թղուկ-որդին

Նորերս «Прелюдие Шопена» վերնագրով մի վեպիկ տպվեց «Новое Время» լրագրում, որ բաւական աղմուկ հանեց ռուսաց մամուլի մէջ: Բայց նա գործով հանեց ոչ թէ իբրև մի գրական, գեղարուեստական աշխատութիւն—այդ կողմից նա կիրառելի է դիմանում, այլ որովհետև նրա հեղինակը հուշակաւոր ռուս փիլիսոփայ գրող Լ. Տոլստոյի որդին է, երիտասարդ կոմս Լ. Տոլստոյ և որովհետև որդու վեպիկն ուղղված է հօր փիլիսոփայական հայեացքներին և գլխաւորապէս նրա «Կրեյցերեան Սոնատ» գեղմ Որդին վրնաւորվել է հօր դէմ:

Ինչպէս յայտնի է, «Կրեյցերեան Սոնատ» մէջ Լ. Տոլստոյ ամուրիութեան դադարի մէջ քարոզում և դատաւարարում է մարմնական սէքս, սեռական յարաբերութիւնը տղամարդի և կնոջ մէջ, նա ընդունում է միայն իդէալական, ողջախոհութեան վրա հիմնված սէքսը: Նա չէ ընդունում ընտանիքը, որ արդիւն է միայն ֆիզիկական մերձակոթութեան իրկու սեռի մէջ: Նա հերքում է ընտանիքը, երբևէ անստանալան կրքի արդիւնք, իբրև մի գործարարական շնորհիւն և ճաղարկներ:

Նայ, այսօր-էլուց մի հարս կը բերէ, այն ժամանակ աղվան էլ «հալաթ» մի տեղ կը տայ:

Նոյնն է լինում և հասարակական կեանքում: Հաւասարութիւն և ազատ ձայնատուութիւն հասարակական բոլոր գործերում և ընտրութիւններում—սովորաբար չէ լինում, հասարակական բոլոր թիւ թէ շատ խոշոր ու կարևոր հարցերը վճռվում են ոչ այնքան բոլորի ձայնով ու կամքով, որքան մէկի կամ շատ-շատ մի-երկու ուղածի պէս: Պաշտօնեաների ընտրութիւն, հողի բաժանում, տուրքերի բաշխում, եկեղեցու, դպրոցի և այս կամ այն ուրիշ բարենպաստական վեճանակար հաստատութեան ձեռնարկութիւն—իսկապէս մէկ կամ երկու հոգու ուղեւորն է լինում, այսպէս ասած՝ դուրս առաջաւոր ու «խիստ» մարդկանց: Մինչև նրանք չունենան, ոչ մի գործ չի լինի: Նրանք իրանց յետևից բարձր են տալիս ժողովրդին: Ելի մեծի դադարի մէջ:

Նրա կեանքը, նրա վարմունքը, նրա քաջածին մեղ համար է միայն մոլոր ու անհասկանալի: Իր արածները ոչ մէկը նրա համար մտք չէ, բոլորն էլ պարզ խելքին մօտիկ: Նա, ճիշդ է, չէ կարող բացատրել ձեռք թէ ինչի համար է այդպէս եղել, այդպէս սահմանվել: Բայց գիտէ, որ այդ է կարգը, այդ է օրէնքը, ուրիշ կերպ չի լինի, պէտք է այդպէս լինի: Գուց բարեկամն է, որ նա աղվան մարդու չէ տալիս, բռնութիւն է գործ դնում, բայց նա բռնութիւն գործ դնելու վրա չէ էլ մտածել: Նա միայն մտածում է, որ տան գործը չը կանգնի, կարելիներէ չաւելցնի, աշխատող չը պակսի, մի խօսքով՝ ապրուստը չը կտրվի: Իսկ դրա վրա նա ձեռնդրելու անելի է մտածում: Եւ ինչպէս կարող է դրա վրա չը մտածել: Զէ որ նրա ամբողջ գոյութիւնը, նրա բոլոր անաշխատ ու աշխատանքը միմիայն հայրիկ ու տանուտի համար է, ուրիշ ինչի համար է նա ապրում: Մարդկային ոգու բոլոր ձգտումները, նրա խելքին ու

Կրեյցով «Կրեյցերեան Սոնատ» Տոլստոյ իբրև բնաբան գրել է Աւետարանի այս խօսքը. «Ճշմարտութիւն եմ ասում ձեզ, ով նայում է կնոջ վրա ցանկութեամբ, նա արդէն շնաւում է նրա հետ իր սրտում»: Եւ ահա Տոլստոյ—որդին դրա գէտ է դնում Աւետարանի այս խօսքերը: Ճշմարտութիւն մարդը իր հօրը, մօրը և դուռնի կնոջ հետևի և լինեն մի մարմին»:

«Համաձայնեցեք, ասում է Միտսկին «НОВОСТИ» լրագրի մէջ, որ այդպիսի մի տեսարան գրական ասպարէզում կարող է չառ մարդիկ հաւաքել իր շուրջը: Եթէ խոր կերպով քննենք հօր և որդու վեճը, մենք կը տեսնենք, որ մեր առաջ բացվում է ոչ թէ մի գրական հանդէս, այլ մի աւելի լուրջ և ցաւալի տեսարան: Տոլստոյի ընտանիքի մէջ ծագել է վեճ—լինի թէ չը լինի ընտանիքը, ընդհանրապէս: Տոլստոյ-հայրը, ընտանիքի գլուխը, ստեղծողը, նրա գլուխն է պատճառը, ծերութեան հասակում հրաժարվում է ոչ թէ միայն իր անցեալից, կենցաղական և ընտանեկան անցեալից, այլ և իր գրական անցեալից, որ նա նուրբէր էր ընտանեկան կեանքի նկարագրութեան և փառաբանութեան»:

Եւ ճշմարտ, Լ. Տոլստոյի նախկին ամենալաւ աշխատութիւնները՝ «Աննա Կարենինա», «Պատերազմ և խաղաղութիւն» վեպերը, իրանց էությունը ոչ այլ ինչ են, եթէ ոչ ընտանեկան կեանքի և ուրախութիւնների կատարեալ ապօթէօգ: Այժմ, Տոլստոյ հրաժարվում է իր անցեալից և քարոզում է ընտանիքի քննումը, օրինաւոր թէ արդէն Նա իր հերոսները մէկի բերանով քարոզում է. «Մարդիկ ամուսնանում են միայն զուգակողման համար և ամուսնութիւնը դուրս է գալիս կամ խաբէութիւն կամ բռնութիւն: Երբ խաբէութիւն է, դեռ հեշտ է տանիք, մարդը և կինը խաբում են մի-միւր մարդկանց, թէ նրանք հաւատարիմ են միմեանց, բայց սպում են կամ բաղձնաբերում: Երբ խաբէութիւն է, բայց երբ, ինչպէս յաճախ պատահում է, մարդը և կինը պարտաւորվել են միմեանց ապրել ամբողջ կեանքը և երկրորդ ամուսնի սկսած արդէն ասում են միմեանց, և չեն բաժանվում, այն ժամանակ առաջ է գալիս այն սարսափելի դժուրը, որից ազատվելու համար մարդիկ սպառնութիւն են գործում, թուանաւորում են միմեանց և այլն»:

Տոլստոյ-հօր այս մտքերի մէջ չէ կարելի ժամանակակից ամուսնական կեանքի ճշմարտ պատկերը չը տեսնել: Միայն ամեն մի մարդ իրաւունք ունի ասել նրան. «Մենք չենք հաւատում ձեր անկեղծութեան, որովհետև ձու սեպհական ընտանիքը ըս քարոզած մտքերի դէմ է խօսում: Ըս դատկները կենդանի ապացոյցներ են ձու դէմ: Երբ դու երիտասարդ էիր և

այն ժամանակ ամուսնական կեանքից հրաժարվել մի մեծ քաղցրութիւն էր, դու ասում էիր ինչպէս ամենքը: Եւ այդ քաղցրութիւնը, որ դու չը դործեցիր իր ժամանակին, քարոզում են մեզ՝ երիտասարդներն և ուժեղներն այսօր, երբ ժամանակը անցել է»: Եւ ահա այդ խօսքերը, որ ասում էին մինչև այժմ ընդառնանքը, այսօր հօր երեսուն է տալիս որդին, որն արդէն ինքն իր գոյութեամբ մի կենդանի, բայց լուռ բողբ է հօր քարոզած մտքերի դէմ:

Տոլստոյ-հայրը ամուսնական և անստանալան բան է համարում ֆիզիկական մերձակոթութիւնը մարդու և կնոջ մէջ: Տոլստոյ-որդին ասում է. «Տեսե՛ք, թէ ինչ անհեթեթ բան է այդ. երեխայութիւնից մեղ սովորեցնում են նայել սեռական յարաբերութիւններ խնդրի վրա, իբրև մի խորհրդանշան և արդիւնված պողի վրա: Մեղ ասում են, որ դա մեղ է և ոսկայն սեռական յարաբերութիւնը մարդու համար մի անխուսափելի ֆիզիոլոգիական պահանջ է, առանց որի ինքն մարդն ևս գոյութիւն չէր ունենայ աշխարհիս երեսին: Միթէ կարելի է մեղը համարել այն, որից մենք առաջ ենք եկել, որը մեղ չունի է տուել, ներշնչել է մեր մէջ սուրբ, աստուածային կեանք»:

Որքան էլ Տոլստոյ-հօր քարոզած մտքերը անբնական և անհեթեթ երևան, բայց գեղարուեստական այն վտեմ ձևը, որով նա արտայայտում է այդ մտքերը և կենսական այն ճշմարտութիւնները, որոնցով համակված են նրանք, անտարակապ մեծ առաւելութիւն են տալիս հուշակաւոր ծերունի գրողին և նրան շատ բան ներվում է: Տոլստոյ-որդու գրութեան դուրս է որ և է գեղարուեստական և նոյն իսկ գրական արմանիքից, բայց նրա քարոզած մտքերին կարելի էր նոյն իսկ մեծ համակրութեամբ վերաբերվել, եթէ, դժբաղդաբար, նա չափազանցութեան չը հասցնէր նրանց: Պաշտպանելով ամուսնութեան դադարի մեծ անհաւան յարաբերութիւնների անհրաժեշտութիւնը, նա այնքան առաջ է դրնում, որ նոյն իսկ հեղքում է սէքսը և մարդկային բոլոր երբանիքութիւնը տեսնում է սեռական յարաբերութիւնների մէջ: Նա նոյն իսկ գեղեցկութիւնը հեղքում է ասելով, թէ գործը կանայք գրեթէ մի և նոյնն են ներսից և դրսից...»:

«Հակայ-հայրը, — վերջացնում է Միտսկին իր յօդուածը, որից օգտվում ենք մենք—չինքն է մի բարձր, մաւր պլրամիդ, իսկ թղուկ—որդին զինվել է նրա դէմ այն պատճառով, որ կանգնած է այդ պլրամիդի ստորին աստիճանի վրա և նայում է դեմին, չը տեսնելով թէ ինչ կայ իր զինվելու վերին»:

Հ. Ա.

դեղութիւնն է կրում:

Նրա հագածի մի մասն էլ իր ցանած կանգնիք ու քաղցրութիւն է: Դա համ է ծան է հստակ, համ երկար դիմանում, նրա աշխատանքին ու ջրովնիքին ուրիշ ոչ մի բան դրանից աւելի չէր դիմանալ: Շատ էլ դիմանալ աշխատանքին, լուռ աչքին չէր դիմանալ: Բայց սպանելի, տաք-տաք մոխրաշերտ ու քարերին խփելուն զորութեամբ պիտի դիմանալ իրանց ցանած ու իրանց ձեռքով գործած, ամուսն ու դիմացկուն զգովից աւելի: Հապա ինչքան պարզ ու բնական է նրա խօսվածքը և լեզուն առհասարակ: Սովորաբար պարզ, անպաճաճ ու կարճ նախադասութիւններ ու բառեր, բոլորը մատչելի ու հասկանալի: Ոչինչ վերացական ու երևակայական: Նոյն իսկ վերացական բաները նա արտայայտում է ամենապարզ, բնական ու մատչելի ձևերով: Կարծես թէ նա էլ իր տեսածն ու լսածը լինի, իրանից հեռու չը լինի: Գիւղական խօսածքը ամենաբնորոշ կողմը՝ ճշմարտեղծութիւն ու վիշտից խառնված խօսք: Երբ իսկ միթէ բնութեան աղեղնութեան հետեանք չէ: Մի մարդ, որ ամբողջապէս բնական-բուսական կեանքով է ապրում, որի բոլոր իդէաները հայելի ու ռեալիտէ և անհերք մէջ են, ինչ զարմանալի բան, որ անդադար նրա խօսվածքն էլ միայն այդ ֆիզիկական բնութիւնը ինչեցին, թէ և իրան յատուկ կողմ ու տեղը արտայայտութիւնով:

Այդպէս բնական են և նրա բոլոր մտքերը, մտածմունքները, յոյսերը և նոյն իսկ աղօթքը: Նրա խնդրածը Աստուծուց արտի ու դաշտի բան է. ցանածը բուսելի, մուկն ու մորեխը չը փախնի, կարկուտը չը խփի, իրանց քաղցած չը թողնի, մալերն աւելանալ, կովին փոշիկ տալ, կնոջը շատ-շատ երեխայ, որ մենակ ու անօգնական չը լինի: Եւ ապա մտքերը բաշխի, փորձանքի չարութեան մէջ չը գցի: Երանք անձնական, իրան վերաբերեալ խնդրածներն են: Աշխարհի համար էլ ամենից առաջ նա խնդրում է, որ

ՆԱԲԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևան, յուլիսի 5-ին

Խօսքս այժմ օպօզիցիայի մասին է. պարոն Գ. Բ., որին ես անկանչեցի ճանաչելու, ինքը լինելով կոյր հետեւող պ. Յարութիւնովի, համարում է օպօզիցիան «խաւարի և ստութեան դէմ կռուող ազնիւ դասակարգ»: Ես խորհուրդ կը տայի այդ «ազնիւ դասակարգին» անդամներին փոքր ինչ համատարածիւն և համատարածիւն նայի և առաջ: Ինչ վերաբերում է մեղ շատերին, մեղ համար այդ «ազնիւ դասակարգը» նոյնպէս, եթէ ոչ աւելի, զոռելի է, քան թէ նոյն իսկ պ. Պաշտպանովի: Օպօզիցիան կազմվեց, հրապարակ եղաւ և սկսեց իր գործունէութիւնը ոչ յանուն աղքատների և ուսանողութեան շահելու, ոչ յանուն ճշմարտութեան: Աղքատների շահեր, ուսանողութեան իդէաներ՝ դրանք փայլուն խօսքեր են, որոնցով «խաւարի և ստութեան դէմ կռուող ազնիւ դասակարգը» աշխատում էր մոլորեցնել խելք ճառարակութիւնը: Այդ ազնիւ դասակարգը վառված էր մի անգուստ կրքով՝ խորտակել սանձաւարը և տապալել պ. Պաշտպանովին: Ինչ փոքր, եթէ դրա համար պէտք էր երբեմն ստել և աւելի յաճախ վնասել «Աղքատաց հողաբարձութեան» շահերին, նոյն իսկ կային այնպիսի ազնիւ մարդկանք, որոնք բոլոր սրտից ցանկանում էին, որ հողաբարձութիւնը միանալու, հողաբարձութեան չէնքը փլուտակվի, որպէս զի աւելի լաւ է ճշդի հաստատուիլ թէ որպիսի դադան է պ. Պաշտպանովի: Եւ օպօզիցիան ոչ մի պրօպագանդան, որովհետև նա չէր ուղում շինել, կանգնեցնել և աշխատել: Նրա միակ ցանկութիւնն էր՝ բանդել, և միակ նշանաբանը՝ թշնամութիւն դէպի պ. Պաշտպանովի:

Երբ անցեալ տարի ամառ՝ պ. Ի. Ալաճաթեանը՝ հողաբարձութեան նախագահը, գնաց ճանապարհորդելու, նախադասում էր տէր-Սարգիս քանապ Ուկերեանը, որը և աշխատում էր, ըստ կարողութեան, օգնել մաքրել հողաբարձութեան գործերը: Օպօզիցիայի պարագրուիս պ. Յարութիւնովի ճանդկաւոր է տէր-հօրը և ասում է հետեւեալ խօսքերը՝ «Դուք գործէի երբ ըստ լինի: Պաշտպանովի աճեալ է, ինքն ալ թող սրբել, ինչու գործի մէջ իր խառնուի: Պաշտպանովի աճեալ է, վերջացաւ, ուրեմն հարկ չը կայ մաքրելու, որովհետև դուք եթէ մաքրել, այն ժամանակ ժողովուրդը իր մոռանայ, որ պ. Պաշտպանովի աճեալ էր: Որպիսի կեղտոտ ցինիկ... Եւ այդ «ազնիւ դասակարգին» համարեալ բոլոր անդամներին ձգտումները միայն վնասում էին հողաբարձութեան շահերին, որովհետև նրանք միայն իրանց «եւսին» էին ծառայում և ոչ աղքատների շահերին:

Զը բաւականաւոր հայոց լրագրութեամբ, նրանք դիմեցին ռուս լրագրութեան, պատճառ հասկանալի է. պ. Պաշտպանովի քաղաքագրութիւն է, նրան վնասելու համար պէտք էր իշխանութեան առաջ նրա անձը կառավարող զոյց տալ: Ինչ փոքր դարձեալ, եթէ նոր-Նախիջևանի հայ աղքատների շահերը վնասվին դրանից, նպատակ իս աղքատների շահերը չէին, այլ պ. Պաշտպանովին վնասելը: Ազնիւ դասակարգը՝ այնքան ազնիւ վարվեց այդ կողմից, որ «Прябоский Край» լրագրի քանի մի անմիտ խօս-

խաղաղութիւն լինի: Կափից դուրս նա սիրում է խաղաղութիւնը: Եւ միթէ դա էլ երկարադորած կան աշխատանքի հետեանք չէ: Խաղաղութիւնը որ չը լինի, ինչպէս կարող է նա աշխատել: Խաղաղ բնութեան մէջ խաղաղ աշխատանք, ինքն էլ բնութեան պէս խաղաղ ու անվիրավ: Խաղաղ ու անշարժ ինչպէս բնութեան ժայռերն ու լեռները, երբեմն էլ կըբող ու վրէժնալի, ինչպէս իր լեռները հրաբուխը, ինչպէս փոփոքրիկ, հեղեղն ու կայծակը՝ Նա իր ամեն մի քայլով ու վարմունքով մայր-բնութիւնն է յիշեցնում: Նրա խելքը, նրա պարզութիւնն ու միամտութիւնը, նոյն իսկ կայծածած աղիտութիւնը բնական հիմք ունեն: Ինչ կը լինի այն մարդը, որ շարունակ պարզ բնութեան, նրա արմի ու լուսնեակի, դաշտերի ու լեռների, նրա երկնքի ու ջրերի հետ գործ ունի: Ո՞վ է նրանից աւելի վայելում նրա պարզ լոյսը, նրա պարզ երկնքն ու գետնը, նրա պարզ ու անաղաղ ջրերը: Նոյն իսկ մուկն ու խաւարը իրանց բաւարարակ միմիայնով նա աւելի է տեսնում, քան քաղաքի բնակիչը, ուր լուսնեակ չեղած ժամանակ էլ մարդիկ փողոցներում լապտերներ են վառում, իրար տեսնում ու զոռում: Ուրիշ բան է դեղի դիւրեղը՝ Փորձեցե՛ք ձմրան մի մուկ դիւրեղ մտնել գիւղը: Մուկն անքան սաստիկ է, որ մատը աչքը կոխեն, մարդ չի տեսնի: Զորս կողմը գերեզմանային խաւար ու լուսնութիւն: Չայն չը կայ, լոյս չը կայ, մարդ մի կայծ չը կայ, ու չինչ չի երևում: Մարդ չի իմանում՝ որտեղն է գտնվում, ուր պատուապարկ թաւար, որ ասում են, դա է. կարծես թէ կեանքը դադարած լինի այդտեղ, մարդիկ ապրելիս չը լինեն, մահի թաղաւորութիւն է: Այդ ստեղծի մահացնող խաւարն էլ կայ նրա հոգու մէջ, որ երբեմն աչքի ընկնում նրա պարզութեան ու միամտութեան հետ, ինչպէս պայծառ լուսնեակից յետոյ՝ մուկ ու խաւար դիւրեղ:

8. Մուրադեանց

КУ, А. И. Теръ-Каспарову, 4—25